

# ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



## ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԱՐԵՎԱՇԱՏ ԵՎ ՄՈՒՍԱԼԵՌ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

---

## Բովանդակություն

---

Վերլուծությունն իրականացնող կառույց.....	3
Համայնքների նկարագիր.....	5
Համայնքների վերաբերյալ տեղեկություններ .....	6
Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելություններ.....	7
Համայնքների խմբի տնտեսության նկարագիրն ըստ առաջնային ոլորտների .....	8
1. Հողագործություն .....	8
Բողկի և բազուկի մշակում.....	9
Սմբուկի և պղպեղի մշակում.....	10
Եգիպտացորենի մշակում .....	11
Դդմիկի մշակում .....	12
Բամիայի և ավելի մշակում.....	13
Առաջարկություններ հողագործության ոլորտում .....	14
2. Ջերմոցային տնտեսություններ.....	15
Առաջարկություններ ջերմոցային տնտեսությունների ոլորտում.....	18
3. Խաղողագործություն.....	19
Առաջարկություններ խաղողագործության ոլորտում.....	19
4. Անասնապահություն .....	20
Առաջարկություններ անասնապահության ոլորտում .....	21
Ենթակառուցվածքային ծրագրեր .....	22

---

## Վերլուծությունն իրականացնող կառույց

---

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ  
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

*Համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2015 թ-ի դեկտեմբեր ամսին: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները, և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:*



**Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.**

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում - առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեզրթանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

---

## Համայնքների նկարագիր

---

Համայնքները գտնվում են Արմավիրի մարզում: Համայնքների տնտեսությունների հիմնական ոլորտներն են հողագործությունը և ջերմոցային տնտեսությունները: Դրանց զուգահեռ տնտեսությունների մի փոքր հատվածն էլ զբաղվում է խաղողագործությամբ և անասնապահությամբ:

**Արևաշատ** գյուղը գտնվում է Երևան – Էջմիածին մայրուղու ձախ կողմում, Մուսալեռ գյուղից հետո, «Զվարթնոց» օդանավակայանի անմիջական հարևանությամբ: Գյուղը նախկինում կոչվել է Վարազմայր: Այն հիմնադրվել է 1828 թվականին: Տարածքի ճահճոտ լինելու պատճառով գյուղի բնակիչները տեղափոխվել են մոտ մեկ կիլոմետր հյուսիս-արևելք և նոր գյուղ հիմնադրել: Հին տարածքը գյուղաբնակները կոչում են Հին գեղ կամ Տան-Տեղ: 1953 թվականին գյուղը անվանակոչվել է Արևաշատ:

**Մուսալեռ** գյուղը գտնվում է Երևան-Էջմիածին մայրուղու աջ և ձախ կողմերում: Հեռավորությունը մայրաքաղաքից 12կմ է, իսկ Վաղարշապատ քաղաքից՝ 7 կմ: Համայնքի տարածքը նախկինում (1880 - ականներ) հայտնի է եղել Նասիրապատ անունով: 1957 թվականին վերանվանվել է Գինեվետ, իսկ 1972 թվականին՝ Մուսալեռ: Մուսալեռում ներկայումս գործում են տպարագրատուն, պոլիէթիլենային տոպրակների արտադրամաս, թռչնանոց, գինու գործարան:



## Համայնքների վերաբերյալ տեղեկություններ

Արևաշատ		Մուսալեռ	
<b>Բնակչություն</b>	<b>2265</b>	<b>Բնակչություն</b>	<b>3014</b>
<b>Տնային տնտեսություններ</b>	<b>400</b>	<b>Տնային տնտեսություններ</b>	<b>761</b>
Արոտավայր (հա)	-	Արոտավայր (հա)	51
Վարելահող (հա)	129	Վարելահող (հա)	196
որից՝ ջրովի (հա)	129	որից՝ ջրովի (հա)	170
<b>Ցանվող կուլտուրաներ ներառյալ տնամերձ ջերմոցները (հա)</b>	<b>136</b>	<b>Ցանվող կուլտուրաներ (հա)</b>	<b>51</b>
Լոլիկ (հա)	35	Բամիա (հա)	16
Վարունգ (հա)	41	Ավել (հա)	10
Դդմիկ (հա)	7	Ցորեն (հա)	20
Սմբուկ (հա)	7	Գարի (հա)	15
Բողկ (հա)	40	<b>Այգիներ (հա)</b>	<b>38</b>
Պղպեղ (հա)	2	Խաղող (հա)	29
Բազուկ (հա)	4	Ծիրան (հա)	6
<b>Այգիներ – ծիրան, խաղող, դեղձ (հա)</b>	<b>7</b>	Կեռաս (հա)	2
<b>Խոշոր եղջերավոր անասուններ</b>	<b>295</b>	Դեղձ (հա)	1
որից՝ կով	135	<b>Խոշոր եղջերավոր անասուններ</b>	<b>86</b>
<b>Մանր եղջերավորներ</b>	<b>12</b>	որից՝ կով	35
<b>Խոզեր</b>	<b>70</b>	<b>Մանր եղջերավորներ</b>	<b>52</b>
<b>Տրակտորներ</b>	<b>4</b>	<b>Խոզեր</b>	<b>91</b>
<b>Բեռնատարներ</b>	<b>8</b>	<b>Տրակտորներ</b>	<b>3</b>
		<b>Բեռնատարներ</b>	<b>4</b>

---

## Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելություններ

---

Ստորև ներկայացված են երեք համայնքների մրցակցային առավելությունները:

- Ⓢ *Համայնքների կողքով է անցնում Երևան – Էջմիածին մայրուղին, որը հնարավորություն է ընձեռում համայնքներում ստեղծված բերքի մի մասի իրացման համար: Պատահական անցորդները համայնքներից գնումներ են կատարում:*
- Ⓢ *Մայրաքաղաքին (12 կմ) մոտ գտնվելու հանգամանքը նպաստում է բերքի հիմնական հատվածի արագ իրացմանը, որովհետև բերքը գնող վերավաճառողների մեծ մասը Երևան քաղաքից է:*
- Ⓢ *«Զվարթնոց» միջազգային օդանավակայանը սահմանակից է համայնքներին. Բնակիչների մի ստվար հատված աշխատում է օդանավակայանում, ինչը կրճատել է արտագնա աշխատանքի գնացողների թիվը:*
- Ⓢ *Տեղի բնակիչներն աշխատասեր են: Նրանք ամեն տարի նոր ջերմոցներ են հիմնում և շահագրգռված են տարեցտարի ավելացնելու դրանց քանակը:*
- Ⓢ *Համայնքների բնակիչները ջերմոցային բանջարաբուծության մեծ փորձի ու գիտելիքների պաշար ունեն:*



---

## Համայնքների խմբի տնտեսության նկարագիրն ըստ առաջնային ոլորտների

---

### 1. Հողագործություն

Հողագործությունը համայնքների տնտեսությունների գերակշռող մասն է: Արևաշատի վարելահողերում հիմնականում ցանվում են բոդկ, բագուկ, պղպեղ, դդմիկ, սմբուկ, եգիպտացորեն և քիչ քանակությամբ էլ հացահատիկ: Մուսալեռում ցանվում է բամբակ և ավել: Այս մշակաբույսերի մշակությամբ զբաղվելը համայնքների բնակիչների համար ավանդույթ է դարձել: Անհրաժեշտ սածիլներն աճեցվում են ջերմոցներում: Տնային տնտեսությունները գյուղատնտեսական աշխատանքները հիմնականում կատարում են սեփական ուժերով:

*Սեփականաշնորհման ժամանակ հողակտորները (յուրաքանչյուրը 2000 մ<sup>2</sup>) հավասարաչափ բաշխել են բնակիչների միջև:*

*Աղյուսակ 1. Հողագործությամբ զբաղվողների թիվն ըստ տնտեսությունների չափերի.*

Դասակարգում	Տնտեսությունների թիվ	Հողակտոր (հա)
խոշոր հողագործներ	1	5 հա – ից ավելի
միջին հողագործներ	22	1 հա – 5 հա
փոքր հողագործներ	335	Մինչև 1 հա

*Ստորև ներկայացված են վարելահողերում մշակվող մշակաբույսերի վերաբերյալ տեղեկությունները և շահութաբերության հաշվարկներն ըստ համայնքային ցուցանիշների.*



## Բողկի և բազուկի մշակում

Այս մշակաբույսերը իրենց օգտակար բաղադրությամբ կարևոր տեղ են զբաղեցնում հայկական խոհանոցում: Հայաստանում այս բանջարեղենների համար ձևավորված է կայուն պահանջարկ: Համայնքների բնակչության մեծ մասը վերոնշյալ մշակաբույսերը մշակում են թե՛ իրենց սեփական կարիքները հոգալու համար, թե՛ վաճառքի համար:

Համայնքներում բազուկի և բողկի բերքատվությունը (1000 մ/ք հողատարածքից) 7 տոննա է: Ստացված բերքը վաճառում են վերավաճառողներին աշնանը՝ 120 – 180 դրամով, իսկ հունվար ամսից սկսած՝ 200 - 300 դրամով:

### *Աղյուսակ 2. Բազուկի և բողկի շահութաբերության հաշվարկը (1 000 մ/ք - ի հաշվարկով).*

Անվանում	Գումար
Մերմ	30 000
Վար, ակոսում	25 000
Պարարտանյութ	40 000
Ոռոգում	20 000
Թունաքիմիկատ	10 000
Բանվորների աշխատավարձ	90 000
Տրանսպորտային ծախս	50 000
Ընդամենը ծախս	265 000
Իրացումից հասույթ (7տ x 150 դր.)	1 050 000
Շահույթ	785 000 դրամ

## Մմբուկի և պղպեղի մշակում

Մմբուկը բավականին մեծ տեղ է գրավում սննդի և պահածոների արդյունաբերությունում: Դիտարկվող համայնքներում սմբուկն աճեցնում են վարելահողերում և տնամերձ հողամասերում: Սաձիլները տնկելուց հետո հողի մեջ կլորացված պյուններ են խրում, որի վրա ամրացնում են պոլիէթիլենային թաղանթ: Ինքնաշեն փոքրիկ ջերմոցները մեծ դերակատարում են ունենում մշակաբույսերի բերքատվությունն ավելացնելու գործում:

Համայնքներում պղպեղի մշակությամբ քիչ են զբաղվում, քանի որ համեմատաբար ավելի շատ խնամք պահանջող մշակաբույս է: Ֆերմերները սաձիլները աճեցնում են ջերմոցներում, որտեղ պետք է ապահովվի 22 C ջերմաստիճան:

Համայնքներում այս մշակաբույսերը 1000 մ/ք հողատարածքից տալիս են 8 տոննա բերք: Ստացված բերքը 2015 թվականին վաճառվել է 60 – 200 դրամ (միջինը 130 դրամ): Հողագործների մի մասը ստացված բերքը վաճառում է Երևանի վերավաճառողներին, իսկ մնացած մասը ինքնուրույն վաճառում է շուկայում:

**Աղյուսակ 3. Մմբուկի և պղպեղի շահութաբերության հաշվարկներ**  
(1 000 մ/ք - ի հաշվարկով).

Անվանում	Գումար
Սաձիլ	40 000
Վար, ակոսում	25 000
Պարարտանյութ	70 000
Ռոտզում	27 000
Թունաքիմիկատ	70 000
Քաղհան	90 000
Բանվորների աշխատավարձ	120 000
Տրանսպորտային ծախս	60 000
Ընդամենը ծախս	502 000
Իրացումից հասույթ (8 տ x 130դր.)	1 040 000
<b>Շահույթ</b>	<b>538 000 դրամ</b>

## Եզիպտացորենի մշակում

Համեմատած այլ մշակաբույսերի աճեցման հետ՝ եզիպտացորենի մշակման դեպքում ֆերմերի ֆիզիկական աշխատանքը քիչ է: Դրա համար հողագործների մեծ մասը աճեցնում է նաև եզիպտացորեն:

1000 մ/ք հողակտորում ցանվում է 2 700 սերմ: Մեկ ցողունը տալիս է 3 եզիպտացորեն, բայց, քանի որ երրորդ պտուղը հիմնականում թերհաս է մնում և օգտագործվում է որպես անասնակեր, հաշվարկվում է 2,5 հատ: Միջին ցուցանիշով, նշված տարածությունից հավաքվում է 6750 հատ եզիպտացորեն: Եզիպտացորենի վաճառքը իրականացվում է հատով՝ միջին գինը 120 դրամով:

### *Աղյուսակ 4. Եզիպտացորենի շահութաբերության հաշվարկներ (1 000 մ/ք )*

Անվանում	Գումար
Սերմ	35 000
Վար, ակոսում	25 000
Պարարտանյութ	40 000
Ոռոգում	15 000
Թունաքիմիկատ	10 000
Բանվորների աշխատավարձ	60 000
Տրանսպորտային ծախս	30 000
Ընդամենը ծախս	215 000
Իրացումից հասույթ (6750 x 120 դր.)	810 000
Շահույթ	595 000 դրամ

## Դդմիկի մշակում

Դդմիկի աճեցումն ու մշակումը բավականին աշխատատար է: Այս մշակաբույսի մշակումը նույնպես (սմբուկի մշակման կարգով) իրականացվում է պոլիէթիլենային ծածկի տակ: Հավաքում են բերքի 7-10 օրական, մանր, նուրբ կեղևով, չհասունացած սերմերով պտուղները, որի պատճառով կատարվող աշխատանքները շատանում են: Դդմիկի բերքատվությունը, համեմատած այլ մշակաբույսերի, բարձր է (8 – 10 տոննա.), այդ պատճառով մարդիկ ամեն երկրորդ օրը դուրս են գալիս հավաքման աշխատանքների: Այս մշակաբույսը համեմատաբար ցրտադիմացկուն է:

Ստացված բերքը վաճառում են Երևանից և մարզերից եկած վերավաճառողներին: Վաճառքի գինը 60 – 200 դրամ է (միջինը 130 դրամ): Մանրածախ վաճառքի դեպքում գինը ավելի բարձր է:

### *Աղյուսակ 5. Դդմիկի շահութաբերության հաշվարկը (1 000 մ/ք)*

Անվանում	Գումար
Սերմ	60 000
Վար, ակոսում	30 000
Պարարտանյութ	70 000
Ոռոգում	27 000
Թունաքիմիկատ	10 000
Էլեկտրաէներգիա	30 000
Պոլիէթիլեն	168 000
Բանվորների աշխատավարձ	100 000
Տրանսպորտային ծախս	60 000
Ընդամենը ծախս	555 000
Իրացումից հասույթ (8տ x 120 դր.)	1 040 000
Շահույթ	485 000 դրամ

## Բամիայի և ավելի մշակում

Դիտարկվող համայնքներից բամիա և ավել հիմնականում մշակում են Մուսալեռ համայնքում: Բամիայի և ավելի մշակությամբ հիմնականում տարեցներն են զբաղվում, որովհետև երիտասարդները հիմնականում աշխատում են Զվարթնոց օդանավակայանում կամ լքում են երկիրը արտագնա աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Բամիան համայնքից գնում են թթվի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններն ու Երևանի տարբեր շուկաներում գործող վերավաճառողները: Բամիայի գինը շուկայում 250 – 400 դրամ է (միջին մեծածախ գինը 300 դրամ): Մշակաբույսի բերքատվության միջին ցուցանիշը 1000 ք/մ – ից 3,5 տոննա է:

Ավելը վաճառում են տարբեր մարզերից եկած վերավաճառողներին (աշխատում են իրենց հիմնական հաճախորդների հետ, սակայն հնարավոր է և նոր կապերի ստեղծում): Ըստ մուսալեռցիների՝ ավելի կապման աշխատանքներն իրենց մեջ բարդություն են պարունակում, այդ իսկ պատճառով ամեն համայնքում չեն զբաղվում ավելի արտադրությամբ: Ավելի գինը շուկայում 400 – 1100 դրամ է (միջին մեծածախ գինը՝ 700 դրամ): 1000 մ/ք հողատարածքից միջինով ստանում են մոտ 400 ավել: Ավելի առանձնահատկությունն այն է, որ ավելը չի փչանում, այն հնարավոր է պահել չոր վայրում և ավելի բարձր գնով վաճառել հաջորդ տարում:

### Աղյուսակ 6. Բամիայի շահութաբերության հաշվարկը (1 000 մ/ք).

Անվանում	Գումար
Սերմ	10 000
Վար	10 000
Պարարտանյութ	5 000
Ոռոգում	15 000
Ցանք	5 000
Թունաքիմիկատ	5 000
Բանվորների աշխատավարձ	200 000
Տրանսպորտային ծախս	30 000
Ընդամենը ծախս	280 000
Իրացումից հասույթ (3,5տ x 300դր.)	1 050 000
Շահույթ	770 000 դրամ

**Աղյուսակ 7. Ավելի շահութաբերության հաշվարկը (1 000 մ/ք).**

Անվանում	Գումար
Սերմ	10 000
Վար	10 000
Ոռոգում	15 000
Ցանք	5 000
Բանվորների աշխատավարձ	50 000
Քաղել	30 000
Տրանսպորտային ծախս	10 000
Ընդամենը ծախս	130 000
Իրացումից հասույթ (400 x 700 դր.)	280 000
Շահույթ	150 000 դրամ

**Առաջարկություններ հողագործության ոլորտում**

- Ցանվող մշակաբույսերի նոր սերմերի ձեռքբերման և փորձարկման աջակցություն:
- Գյուղատնտեսական աշխատանքների մեխանիզացում, որը կկրճատի մարդու ֆիզիկական աշխատանքը:
- Արևաշատում ոռոգման համակարգի վերանորոգում, ինչը կնպաստի գյուղացիական աշխատանքների ժամանակին կատարմանը:
- Պահածոների փոքր արտադրամասերի հիմնում:
- Համայնքներում նոր մշակաբույսերի և հատապտուղների (ազնվամորի, հաղարջ, ելակ, սև մոշ) փորձնական մշակման աջակցություն:

## 2. Ջերմոցային տնտեսություններ

Դիտարկվող համայնքներում ջերմոցային տնտեսություններ են հիմնել դեռևս խորհրդային տարիներից: Հողագործների մի մասը, տեսնելով ոլորտի շահութաբերությունը, սկսել է ջերմոցներ հիմնել: Ներկայումս համայնքներում (մասնավորապես՝ Արևաշատում) առկա են մեծ քանակի (խորհրդային միության ժամանակ սարքված) ապակեպատ ջերմոցներ:

Վերջին տարիներին բնակչության մեծ մասը իրենց հողատարածքներում սեփական ուժերով ինքնաշեն ջերմոցներ է հիմնել՝ ծածկելով հասարակ երկշերտ պոլիէթիլենային ծածկով: Ջերմոցներում աճեցնում են բանջարաբուստանային կուլտուրաներ, հիմնականում վարունգ և լոլիկ (մասնավոր այլ դեպքերում նաև պղպեղ, սմբուկ, հազար և այլն):

Տեսնելով հոլանդական նոր տեխնոլոգիաներով պատրաստված ջերմատները՝ հողագործները սկսել են նույն ինքնաշեն ջերմատները ծածկել հոլանդական արտադրության կամ այլ բարձր որակի պոլիէթիլենային թաղանթներով (դրանք, համեմատած առկա հասարակ թաղանթներին, ավելի թանկ են, այդ իսկ պատճառով բոլորը չեն, որ կարողանում են փոխարինել): Նշված պոլիէթիլենային թաղանթները օգտագործելու դեպքում մշակաբույսերի բերքատվությունը բարձրանում է:

Համայնքներում այժմ ամբողջովին նոր տեխնոլոգիաներով պատրաստված ջերմոցներ կան, որոնցում մշակաբույսերի բերքատվությունն ավելի բարձր է: Այս ջերմատներն օրինակ են հանդիսանում մնացած հողագործների համար: Ներկայումս համայնքներում հողագործների մեծ մասը ցանկանում է նշված նորմերին համապատասխան ջերմոցներ հիմնել, սակայն ֆինանսական միջոցները չեն բավականացնում (հողագործները երկարաժամկետ ցածր տոկոսադրույքով վարկերի կարիք ունեն): Մարդկանց մի հատված էլ, կախված իրենց ֆինանսական հնարավորություններից, տարեցտարի նման ջերմոցներ է հիմնում:

*Համայնքներում վարունգի միջին բերքատվությունը 1000 ք/մ ջերմոցում 8 տոննա է: Մեկ կիլոգրամ վարունգը վաճառվում է միջինը 700 դրամով:*

*Համայնքներում լոլիկի բերքատվությունը 1000 ք/մ ջերմոցում 15 տոննա է: Մեկ կիլոգրամ լոլիկը վաճառվում է միջինը 500 դրամով:*



Նշված մշակաբույսերի բերքը գնում են Երևանից և տարբեր մարզերից եկած վերավաճառողները: Հողագործների մի մասը բերքը շուկայում վաճառում է սեփական ուժերով:

**Աղյուսակ 8. Ջերմոցային տնտեսություններով զբաղվողների թիվն ըստ տնտեսությունների չափերի.**

Դասակարգում	Տնտեսությունների թիվ	Հողակտոր (հա)
խոշոր	4	3 000 մ/ք և ավելի
միջին	22	1 000 մ/ք – 3 000 մ/ք
փոքր	145	500 մ/ք – 1 000 մ/ք

**Աղյուսակ 9. Նոր ջերմոցի կառուցման և հիմնական միջոցների մաշվածության ամորտիզացիայի հաշվարկը (1 000 մ/ք).**

Անվանում	Արժեքը / դրամ	Օգտագործման ժամկետը	Մաշվածությունը մեկ տարում / դրամ
Ծածկասյուն	995 000	20	49 700
Սյուն	380 000	20	19 000
Քառանկյուն սյուն	232 000	20	11 600
Ջրթափ	120 000	20	6 000
Շինանյութ	44 000	20	2 200
Շինարարական աշխ.	500 000	20	25 000
Բակ	70 000	15	4 700
Վառարան	540 000	10	54 000
Մետաղալար	72 000	5	14 400
Կաթիլային համակարգ	93 700	4	23 400
Պոլիէթիլեն	647 000	3	215 700
Ռետինե խողովակներ	80 000	3	26 700
Պոմպ	45 000	3	15 000
Փական	12 600	2	6 300
Ջրի ֆիլտր	15 000	2	7 500
Մետաղալար	72 000	5	14 400
Այլ ծախսեր	50 000	-	50 000
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>3 966 300</b>	-	<b>531 200</b>

*Ստորև ներկայացված են ջերմոցներում աճեցվող հիմնական մշակաբույսերի շահութաբերության հաշվարկները:*

*Աղյուսակ 10. Լոլիկի շահութաբերության հաշվարկը (1 000 մ/ք)*

Անվանում	Գումար
Մերմ	150 000
Վար մինիտրակտորով	20 000
Պարարտանյութ	105 000
Ոռոգում (կաթիլային)	15 000
Գազ	200 000
Թունաքիմիկատ	300 000
Էլեկտրաէներգիա	50 000
Թեյ	20 000
Տրանսպորտային ծախս	60 000
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	531 200
Ընդամենը ծախս	1 451 200
Իրացումից հասույթ (15տ x 500դր.)	7 500 000
<b>Շահույթ</b>	<b>6 048 800</b>

*Աղյուսակ 11. Վարունգի շահութաբերության հաշվարկը (1 000 մ/ք)*

Անվանում	Գումար
Մերմ	150 000
Վար մինիտրակտորով	20 000
Պարարտանյութ	105 000
Ոռոգում (կաթիլային)	15 000
Գազ	200 000
Թունաքիմիկատ	300 000
Էլեկտրաէներգիա	50 000
Թեյ	20 000
Տրանսպորտային ծախս	60 000
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	531 200
Ընդամենը ծախս	1 451 200
Իրացումից հասույթ (8տ x 700դր.)	5 600 000
<b>Շահույթ</b>	<b>4 148 800</b>

Հաշվարկները վկայում են, որ համայնքներում ջերմոցային տնտեսություններով զբաղվելը անհամեմատ ավելի շահութաբեր է: Այդ պատճառով է, որ մարդիկ քիչ – քիչ հողագործությունից անցում են կատարում դեպի ջերմոցային տնտեսություններ:

## Առաջարկություններ ջերմոցային տնտեսությունների ոլորտում

- Նոր արդյունավետ ջերմոցների ստանդարտներին համապատասխան ջերմոցների հիմնում, և տեխնոլոգիական դասընթացների կազմակերպում:
- Նոր ջերմոցների կառուցմանն ուղղված ֆինանսական աջակցության տրամադրում (ցածր տոկոսադրույքով վարկեր, փոխառություններ, գրանտներ):
- Համայնքներում նոր մշակաբույսերի և հատապտուղների փորձնական մշակում:
- Բիզնեսի արդյունավետ կազմակերպման և կառավարման դասընթացների իրականացում:

### 3. Խաղողագործություն

Խաղողագործությունը համայնքներում գնալով նվազում է: Մուսալեռ համայնքը Խորհրդային Միության ժամանակահատվածում եղել է խաղողագործական կենտրոններից մեկը: 250 հա խաղողի այգիներից ներկայումս մնացել է ընդամենը 29 հա: Ըստ խաղողագործների՝ հիմնական պատճառն այն է, որ մշակման աշխատանքները դժվար են, իսկ բերքի մթերման գինը՝ համեմատաբար ցածր (140 դրամ): Բերքի մթերման ժամանակ հիմնականում խնդիրներ են առաջանում. մթերող կազմակերպությունները բերքը չեն ընդունում: Հիմնական բերքը ընդունում են ՆՈՅ, ՄԱՊ և Պռոշյանի գինու և կոնյակի գործարանները: 1 հա հողատարածքից համայնքում ստանում են 15 տոննա խաղող:

*Աղյուսակ 12. Ստորև ներկայացված է խաղողագործության շահութաբերության հաշվարկը 1 հա հողատարածքում:*

Անվանում	Գումար
Էտում	40 000
Վար	15 000
Մշակման աշխատանքներ	120 000
Ջուր	150 000
Հորում	40 000
Գարնանային աշխատանքներ	20 000
Պարարտացում	140 000
Բուժում	120 000
Բանվորների աշխատավարձ	275 000
Տրանսպորտային ծախս	30 000
Այլ ծախսեր	40 000
Ընդամենը ծախս	990 000
Իրացումից հասույթ ( 15տ x 140դր.)	2 100 000
Շահույթ	1 110 000 դրամ

Առաջարկություններ խաղողագործության ոլորտում

- 🍷 Սեղանի և քիշմիշ տեսակի խաղողի աճեցում:
- 🍷 Գինեգործության ոլորտում բիզնեսի արդյունավետ կազմակերպման և տեխնոլոգիական դասընթացների կազմակերպում:
- 🍷 Ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրում:

## 4. Անասնապահություն

Համայնքներում անասնապահությամբ է զբաղվում 113 տնտեսություն: Տնտեսությունների գերակշռող մասը (105 տնտեսություն) ունի մեկ-երկու գլուխ կով, կան նաև անասնապահական մեծ և միջին տնտեսություններ: Հիմնականում պահում են խոշոր եղջերավոր անասուններ: Արոտավայրեր չունենալու պատճառով մարդիկ անասնապահությամբ չեն զբաղվում:

Համայնքում խտացված կերերի արտադրություն չկա, կերերը ներկրվում են դրսից: Այս տարի խոտի հակը գնել են 1100 – 1400 դրամով:

Ֆերմերների կարծիքով անհրաժեշտ է տեղում հիմնել արհեստական սերմնավորման կայան, ինչը ֆերմերներին հնարավորություն կտա տարածքին ադապտացված կաթնատու անասուններ ունենալ: Տվյալ անասունների ճիշտ խնամքի դեպքում կաթի ծավալը զգալի կավելանա: Համայնքներում կաթի մթերում չի իրականացվում, ստացված կաթը և կաթնամթերքը վաճառվում է համայնքի ներսում՝ համեմատաբար ավելի թանկ գներով:

Օրինակ՝ կաթը այլ համայնքներից մթերում են 100 – 140 դրամով, իսկ դիտարկվող համայնքներում կաթը վաճառվում է 200 – 250 դրամ:

Ստորև ներկայացվում է ֆերմերների բաշխվածությունն ըստ պահվող անասնազլխաքանակի:

**Աղյուսակ 13. Անասնապահական տնտեսությունների չափերը (Խոշոր եղջերավոր անասնապահություն)**

Դասակարգում	Տնտեսությունների թիվ	Անասնազլխաքանակ
Խոշոր ֆերմեր	4	25 - 50 գլուխ
Միջին ֆերմեր	4	10 - 25 գլուխ
Փոքր ֆերմեր	105	1 - 10 գլուխ

Ֆերմերները անասունների խնամքը կազմակերպում են համայնքներում, որովհետև արոտավայրեր չունեն:

Կովերի կաթնատվությունը ցածր է: Մեկ կովի միջին կաթնատվությունը տարեկան մոտ 1400 - 1700 լիտր է: Տնտեսությունները տնային պայմաններում իրականացնում են պանրի, յուղի և մածունի արտադրություն:

Կաթի արտադրության մեջ նոր տեխնոլոգիաներ չեն կիրառվում: Պանիրը արտադրում են տնային պայմաններում և օգտագործում ավանդական տեխնոլոգիաներ: Արտադրության պայմանները չեն համապատասխանում որակյալ արտադրանքի թողարկման նորմերին: Այդ պատճառով պանրի մեծ մասը վաճառվում է գյուղում կամ մոտ քաղաքներում ապրող բարեկամներին: Արտադրանքի մնացած մասն էլ օգտագործվում է սեփական կարիքների բավարարման համար:

Անասուններին՝ որպես մսացու, վաճառում են Հայաստանի տարբեր համայնքներից եկած վերավաճառողներին: Գինը թելադրում է վերավաճառողը: Մարդկանց մի հատված էլ մորթի և վաճառքի գործընթացը կազմակերպում է իրենց բակերում:

### **Առաջարկություններ անասնապահության ոլորտում**

- Ցածր տոկոսադրույքով գյուղատնտեսական վարկերի տրամադրում:
- Անասունների արհեստական սերմնավորման լայնատարած կիրառում:
- Պանրի արտադրության պայմանների և տեխնոլոգիաների վերաբերյալ դասընթացների կազմակերպում:

---

## Ենթակառուցվածքային ծրագրեր

---

Ստորև ներկայացված են համայնքերի տնտեսությունների զարգացման վրա էական ազդեցություն ունեցող փոքր ենթակառուցվածքային ծրագրերը:

### Արևաշատ

Մեփականաշնորհած վարելահողերը հիմնականում ջրովի են, սակայն ոռոգման ցանցի ոչ բարվոք լինելու պատճառով ունենում են հսկայական ջրի կորուստ, ինչը անմիջական ազդեցություն է ունենում բերքի ինքնարժեքի բարձրացման վրա: Արդյունքում մարդիկ իրենց վարելահողերը ժամանակին չեն կարողանում ջրել և բերքահավաքին ստանում են մինիմալ արդյունք: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր հողագործ առաջին հերթին սպասում է ոռոգման ցանցի վերանորոգմանը:

- Ոռոգման ջրագծերի վերակառուցում՝ մոտ 1 կմ: Ծրագրի իրականացումից կօգտվեն մոտ 138 տնտեսություններ:



Շնորհակալություն ենք հայտնում Արևաշատ և Մուսալեռ համայնքների գյուղապետարաններին՝ հանձնելու գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

